ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ապրիլի 2013 թվականի N 170-Ա

ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆՈՂ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առաջատար պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորում անցկացնող ատեստավորման հանձնաժողովի կազմը՝

1) ***Էլզա Հովհաննիսյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ,

2) ***Սամվել Հակոբյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ,

3) ***Կարեն Բարսեղյան*** - Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի վերահսկողության և վերլուծության վարչության գլխավոր մասնագետ,

4) ***Միքայել Եղիազարյան*** - Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի վերահսկողության և վերլուծության վարչության գլխավոր մասնագետ,

5) ***Մելսիկ Զաքարյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Հրազդանի Վ. Սարոյանի անվան N 11 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրեն,

6) ***Անդրանիկ Բավեյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Հրազդանի N 14 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրեն:

2. Հանձնաժողովի նախագահ նշանակել՝ ***Է. Հովհաննիսյանին***, քարտուղար՝ ***Կ. Բարսեղյանին***:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Գ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ